



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92

Fax /0322/ 2-07-70

թիվ \_\_\_\_\_

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 2022 թ.

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԱԿՈՒՄԲԻ  
ԼՐԱԳՐՈՂ ԳՈՀԱՐ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ  
Էլ.փոստ Stepanyan Gohar <goharstepanyan17@mail.ru  
հեռ. 093-86-62-37

Ի պատասխան Ձեր 05.09.2022թ. հարցման

Հարգելի Գոհար Ստեփանյան

Ներկայացվում է տեղեկատվություն համաձայն Ձեր կողմից նշված հարցերի:

1. Համաձայն 2022թ. Լոռու մարզի հողային հաշվեկշռի Լոռու մարզում առկա 42001.7 հա վարելահողերից 2022թ-ին մշակվել է 22 200 հա:
2. Համաձայն ազգային վիճակագրական կոմիտեի Լոռու մարզային վարչության տվյալների հացահատիկի ցանքատարածությունները վերջին 3 տարիներին կազմել են.  
10559 հա – 2020թ.  
11363 հա – 2021թ.  
11989 հա – 2022թ.
3. Մարզի ցանքատարածությունների գերակշռող մասը զբաղեցնում են հացահատիկը և կարտոֆիլը: Բարձրարժեք նոր մշակաբույսերի աճեցման վերաբերյալ այս պահին տեղեկատվություն չունենք:
4. Ապահովագրական պայմանագրերի վերաբերյալ տեղեկատվությունը ամփոփվում և տեղադրվում է ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կայքում՝ ՀՀ Գյուղատնտեսական պետական աջակցության>> ծրագրերի տարեկան հաշվետվությունում, համաձայն որի 2021թ-ին Լոռու մարզում կնքվել է 1482 ապահովագրական պայմանագիր:
5. Կարկտահարության հետևանքով վնասվել է շուրջ 2388 հա հացահատիկի, 555 հա կարտոֆիլի, 298 հա բանջարեղենի, 202 հա պտուղ-հատապտղի, 11 հա հատիկալնդեղենի և 10 հա կերային մշակաբույսերի ցանքատարածություններ և տնամերձեր: Վնասների դրամական չափերի վերաբերյալ հաշվարկները ըստ անհրաժեշտության կատարվում են ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից:
6. Նմանատիպ տվյալներ մարզպետարանը չի տիրապետում:

Հարցեր՝ 7, 8, 9

Մարզում անասնաբուծության բնագավառում իրականացվում են մի շարք պետական աջակցության ծրագրեր: <<Փոքր և միջին <<խելացի>> անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման աջակցության>> ծրագրի շրջանակներում հիմնվել են թվով 6 անասնաշենքեր և ներկայումս ընթացքի մեջ են թվով 7-ի կառուցման աշխատանքները՝ Վանաձոր, Սպիտակ համայնքներում, Նովոսելցովո, Արևաշող, Ամրակից, Մեծ Պարնի և Սարատովկա վարչական տարածքներում:

Համաձայն ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից մշակված ծրագրի, յուրաքանչյուր տարի մարզի անասնաբուժական ծառայության կողմից իրականացվում է հակաանասնահամաճարակային միջոցառումներ, որի արդյունքում վերջին տարիներին մարզում գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների բռնկման դեպքեր չի արձանագրվել: Մարզում կան թվով 67 անասնաբույժներ:

Լոռու մարզում առկա խոշոր եղջերավոր, մանր եղջերավոր կենդանիների և խոզերի գլխաքանակը 2022թ-ի հունվարի 1-ի դրությամբ

h/h	Անվանում	գլխաքանակ
1	խոշոր եղջերավոր կենդանիներ, որից կովեր	72049 36262
2	Մանր եղջ. կենդ. որից՝ ոչխարներ այծեր	30 588 28837 1751
3	խոզեր	11953

08/09/2022

X 

ԱՐԱՄ ԽԱԶԱՏՐՅԱՆ

Հարգանքով՝

Ա. Խաչատրյան